

Ն Ի Ի Թ Ե ր

Հ Ա Յ Ա Ջ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

Գ Ր. Խ.

Ճանապարհորդներ.—Հայ Թերթերը մինչև 1870 Թ. հրերև պատահական ազգագրական նիւթ.—Արտվեանը իբրև ազգագրութեան առաջին ռահվիրաններից մէկը.—Մի քերականութիւնը վաղազոյն ազգագրական «աշխատութիւն».—Նոր հոսանք. Արուսեանցի և հետեւողներ (1870—1887).—Կանոնաւոր սիստեմի կարիք. ծրագրի պահանջ.—«Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների» (1887 թ.). մի քանի քաղածքներ.—«Ծրագրի» կարեւորութիւնը նիւթեր հաւաքելու գործում.—Գրքեր և Թերթեր 1887-ից յետոյ.—Մասնագիտական ազգագրական հրատարակութիւններ.—Հայ ազգագրութեան ասպազան. ըղձական կէտեր—desiderata.

Հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթեր՝ թէև հաստուկտոր և ցիրուցան դտնում ենք դեռ շատ վաղ եւրոպացի ճանապարհորդների գրածքներում, որոնք այցելել են Հայաստան և հայաբնակ երկիրներ սկսած XIII դարուց, ինչպէս Ռուբրուքըլիս, Մարկո Պոլո, Կոնտարինի, Շիլլիքերգեր, Օլէարիոս, Շառլէն, Տավեռնիէ, Տուռնըֆուռ, Դիւբոս դը Մոնպէռո, Պաուռօս, Հակոսհաուզէն և ուրիշ շատերը *): Վերջինս, օրինակ, որ այցելել

*) Ափսոս որ ներկայ համառօտ տեսութեան մէջ հնարաւորութիւն չունինք օգտուելու, ինչպէս հարկն է, միջնադարեան և նոր ժամանակների եւրոպական ճանապարհորդների և այլ մատենագիրների լիշած հայ ազգագրութեան յատկացեալ տեղեկութիւններից—մինչև այդ մասին մեզնում առանձին մատենախօսական նկարագրութիւններ և կամ զուգէ՛ քաղածօրէն Թարգմանութիւններ լոյս տեսնելը.—մի գործ, որ անշուշտ կարեւորութիւն ունի նաև հայ ազգագրութեան պատմութեան համար: Ճանապարհորդների մասին տես Միանսարեանցի Bibliographia Caucasica et Transcaucasica, Պետերբուրգ, 1874—76: Հմմտ. նոյնպէս՝ Գատուէյրասի՝ Եւրոպական ճանապարհորդները Հայաստանում, «Փորձ», դ. տարի, X.

է Կովկաս և Անդրկովկաս անցեալ դարու 40-ական թւերին, հետաքրքրական անդեկուլթիւններ է հաղորդում Այրարատեան երկրի հայ ազգաբնակուլթեան ընտանեկան, ընկերական և հասարակական կեանքի մի քանի կողմերի, որպէս և նրա հողային համայնքի մասին. չէ մոռացւած և Հայերի հողերը ու եկեղեցական կեանքը և՛ անցողակի, նոյն իսկ ժողովրդական գրականութիւնը:

Անցեալ դարու առաջին կիսի հայ ճանապարհորդներից, որոնք այլ և այլ հայ դաղուլթներ են այցելել և այդ մասին գրուոր յիշատակութիւն թողել, ծանօթ են. — Թաղիադեանց՝ ճանապարհորդութիւն ի Հայս, մասն Ա. (Այրարատ, Սիւնիք): Գիրքը սպաղրւած է Կալկաթա, 1847 թ., բայց ճանապարհորդութիւնը կատարւած է 1816 -- 19 թւերին. ունի ուշադրաւ անդեկուլթիւններ ժողովրդական կեանքից և ժամանակակից հողերականների վիճակից՝ աշխոյժ լեզուով գրւած (գրաբար): Բժշկեան՝ ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանրս, բնակեալս ի Հայկաղանց, սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830: Այստեղ մի առ մի յիշւած են Աւստրիայի, Ունգարիայի, Իտալիայի երկիրների, Մոլդո-Վալաքիայի, Լեհաստանի, Խրիմի և դրացի այլ երկիրների քաղաքներն ու աւանները, ուր բնակութիւն են հաստատած եղել Հայերը. դրա հետ միասին և հարեանցի՝ նրանց կենցաղի և մանաւանդ գատատանի մասին: Լաղարովիչ իր Ստորագրութիւն Կալկաթայի գրքում (Վինետիկ, 1832) առաջ է բերում ճնդկահայ դաղուլթի կեանքից այլ և այլ նկարագիրներ՝ նրանց մի քանի սովորութիւնների, նիստուկացի, զգեստների ևն մասին:

Թէպէտ ճանապարհորդների հաղորդած նիւթերը սովորաբար պատահական են լինում՝ առանց ձգտելու նկարագրողի կողմից թափանցել այս կամ այն յատկանիշները, ենթարկելու նրանց համեմատական ուսումնասիրութեան և շահագործելու պատմութեան կամ լեզվագիտութեան խնդիրների համար, — այնուամենայնիւ նրանց մէջ կարող են պահպանւած լինել թանկազին դիտողութիւններ, որոնց անհրաժեշտ է խնամքով հաւաքել:

Աւելի առատ են աղղաղրական այն նիւթերը, որոնք բախրսեցին լոյս տեսնել հայ թերթերում անցեալ դարու քառասնական

ԹԼԱԿԱՆՆԵՐԻԿ: Դրանցից նախաւորութիւնով Զմիւռնիայի Արշալայ Արարարեանն է (Երկշաբաթաթերթ 1840—1886 թթ.), որ իր գրեթէ կէս դարուայ գործունէութեան ընթացքում շատ հետաքրքրական նիւթեր է լոյս ընծայել նաև հայ ազգազրութեան մասին՝ առաւելապէս հայ գաղութների և մանաւանդ չնդհանրացրի վերաբերմամբ—թղթակցութիւնների ձևով, որոնց մեծ բանակութիւնով ստանում էր թերթը աշխարհիս ամեն կողմից: Աւելի ընդարձակեց ազգադրական հիւղը Վենետիկ Մխիթարեանների Բաղձալէպը (Երկշաբաթաթերթ և ամսաթերթ 1843-ից), նիւթեր հրատարակելով իմիջի այլոց հետևեալ բաժիններից. 1, և ամենից նոխր՝ պէսպէս տեղազրութիւն, ստորազրութիւն և ճանապարհորդական նկարագիրներ չայաստանի այլ և այլ քաղաքների, զաւառների և զտնազան հայ գաղութների մասին, 2, Ժողովրդական աւանդութիւններ՝ մանաւանդ երգեր, առածներ, առակներ և այլն, 3, ազգային սովորոյթներ (օր. ջրօրհնէքի, չամբարձման, հարսանիքի և այլն), 4, ընդհանուր ազգային կոյտուրի պատմութիւնից՝ օր. հայ երաժշտութիւնը, հայ նկարչութիւնը, հայ վաճառականութիւնը և այլն: Սրանից յետոյ գալիս են կարգով—Ճայաստան *) շաբաթաթերթը (1846—56, Կ. Պոլիս), որը հետամուտ լինելով աւելի հնադիտականին՝ տեղաւորում էր իր էջերում և հայաբրնակ քաղաքների վիճակադրութեան, ընտանեկան կեանքին և ազգային սովորութիւններին վերաբերեալ տեղեկութիւններ: Վիէննայի Մխիթարեանների Երոպա շաբաթաթերթը *) (1847—67), որը՝ բացի հայ գաղութների բազմաթիւ նկարագիրներից, ունի հրատարակած և յօււածներ չայոց լեզուի ու զրականութեան անգամ և կոյտուրի մասին. («Միջին դարերու մէջ չայոց արւեստագիտութիւնը և քաղաքակրթութիւնը»), 1850, 8): Բազմաուատ էր նիւթերով Մասիալ *) (շաբաթաթերթ և օրաթերթ, 1852—89, Պոլիս), վերաբերեալ իմիջի այլոց և հայ ազգազրութեան—տեղազրութեան և ճանապարհորդութեան, դրացի ազգերի ուսումնասիրութեան (Գուրդը, Գրդահայը, Գնչուներ և չայը, «ցեղակցութիւն Գերմանացուց ընդ չայս»), չայերի հողային և տնտեսական վիճակին, ազգային բարքերին ու սովորոյթներին և, վերջապէս, հայոց լեզուն և Ժողովրդական անդիր

դրականութեան տեսակներին. Մասէայ Ալաանին (1855—65, Փարիզ՝ յետոյ Թէոլոսիա) իր՝ յատկապէս այլևայլ հայ քաղաքների և գաղութների նկարագիրներով. Խրիմեան հայրիկի Արթուր-Վասայրական ամսաթերթը *) (1855—63 Պոլիս՝ յետոյ Վարապ) իր ժողովրդասիրական ուղղութիւնով (ձանապարհորդութիւններ, «Շինական հայոց կեանքը»), Վանեցոց առաջներ և այլ նման նիւթեր). Թիֆլիսի Մեղու հայաստանին (1858—86, շաբաթաթերթ և օրաթերթ) իր բազմաթիւ նիւթերով ազգադրութեան այլ և այլ ճիւղերից՝ մանաւանդ 70-ական և 80-ական թւերին: Կոռնի հայոց Աշխարհի (1860—63, Թիֆլիս) ժամանակակից հայ ամսաթերթերից ամենից լաւ ըմբռնեց ազգադրութեան կարևորութիւնը՝ հրատարակելով մի շարք նիւթեր, նկարագիրներ անդամ և ժողովրդական-կենցաղավէպ (ընդարձակ ժողովածու հայկական առաջների, նմուշներ Զուլայի, Թիֆլիսի, Նոր-Բայաղիզի, Ղարաբաղի բարբառներից, հատուածներ Արովեանի դրամաքներից և Պոռշեանի «Մօս ու Վարդիթերը»), որը իսկապէս մի սքանչելի ազգադրական պատկեր է Աշտարակի բարք ու սովորոյթների): Համեմատաբար աւելի նոր ժամանակներին են վերաբերւում Կովկասի միւս թերթերը՝ մինչև 1887 թ. -- Արարատ կրօնական ամսագիրը (1868 թւից), որը չը նայած իր յարափոփոխ ծրագրին՝ աւելի զանազան ժամանակ բաւականաչափ նիւթեր և հայ ազգադրութիւնից. Փոքշը (1876—81 ժողովածու՝ յետոյ ամսագիր) իր բազմաթիւ ինքնուրոյն (յատկապէս Քաջբերունու ձանապարհորդական նկատողութիւնները) և մանաւանդ Թարգմանական նկարագիրներով այլ և այլ հայաբնակ կենտրոնների մասին (Ուղևորութիւններ՝ Մանդրօլի, Պատւի, չէֆէլդերի, Ֆօն-Լերսէնֆէլդի, Դէլրօլի, Պետերմանի և այլն). իսկ լրագիրներից՝ Մշակը (1872-ից), Արշապատը, Նոր-Բարք, Տարաղը, որպէս և ամսաթերթ Մարմըր—Թէթի թղթակցութիւնների ծեով և թէ՛ առանձին յօդւածներով նոյն-

*) Նախկին հայ թերթերից մի քանիսի նիւթերի խորագրերը մենք առնել ենք Գալէմքարեանի «Պատմութիւն հայ լրագրութեան գրքից»: Ցաւում ենք, որ ներկայ տեսութիւնը կազմելիս՝ հնարաւորութիւն չունեցանք օգտւելու և մի քանի կարևոր թերթերից և յատկապէս 1887-ից յետոյ հրատարակւածներից. թէև մեր նպատակից դուրս է լեռել այստեղ միառմի բոլոր հայ թերթերը:

պէս տւել են միշտ նիւթեր աղագորութեան զանազան ճիւղերից:

Հայ թերթերից զատ՝ պէտք է մատնանիշ անել յատկապէս Ռուսահայերի մէջ մի-երկու վաղադոյն երկեր, որոնք դարձան օրինակ մեր աղագորական գրականութեան մէջ: Հանճարեղ Արովեանը՝ արդարև բանաստեղծօրէն նկարագրելով ժողովրդական կեանքը, իսկապէս առաջինն էր, որ ճաշակ տւեց հայ աղագորութեան մասին: Նրա անդուդական Վէրք Հայաստանին (1841 դրևած և 1858 տպ.) ոչ միայն դարադուխ է կազմում մեր արևելեան աշխարհաբարի, այլև առաջին դրևածքն էր, որի մէջ հեղինակը այնպէս փայլուն կերպով շահագործեց աղագորութիւնը գեղարւեստական գրականութեան համար: Արովեանը՝ բացի դրանից, մեծ ծառայութիւն է մատուցել աղագորական նիւթեր հաւաքելու գործին՝ ուղեկցելով, ինչպէս արևելեան աղգերի բարքերին և լեզուներին տեղեակ անձ, մի շարք գերմանացի դիտնականներին—Պառոտօտին, Վադնէրին, Հաքստաուզէնին, Բօդէնշտեդտին՝ կովկասում սրանց կատարած ճանապարհորդութիւններէ ժամանակ: («Վէրք Հայաստանի») ից յետոյ դալիս են Պերճ Պոշտանի Սօսս—Վարդիւնէրը, որը մի գեղեցիկ նմանութիւն էր Արովեանի ուղղութեան, Էմինի Վէրք Կոյն Հայաստանի (1850), Գէօրգ Նալվերդեանի Սայաթ-Նովան (1850, Մոսկա), որը՝ բացի գեղարւեստականից՝ մի օրինակելի ուսումնասիրութիւն է հայ բարբառագիտութեան մէջ: Սրանց ժամանակակից է և Ոսկ. Յովհաննիսեանի ձեռնարկած հայ աշուղների շարքը:

Բայց չր նպած չիշեալ այլ և այլ նիւթերին՝ մինչև անցեալ դարու 70-կան թւերը հայ աղագորութիւնը սահմանափակւած էր համարեա բացառապէս գաղութների միակողմանի նկարագրութիւնով և ժողովրդական գրականութեան մի-երկու տեսակով. աղագորութեան միւս ճիւղերը զրեթէ շօշափւած չէին: Աղագորութեան մասին էլ դեռ անորոշ գաղափար ունէին մեզնում. այդ դրողմունքը կարծես միայն հաստիքական կամ աղքատիքական նպատակ ունէր. իսկ ժողովրդի բաղմածաւալ և բաղմապարունակ կեանքը նոյնիսկ ժողովրդի մէջ մտնելով ուսումնասիրելը դեռ զգալի պահանջ չէր դարձել:

XIX դարու 70-ական թւերին սկսում են լոյս տեսնել Գարեգին վ. Սրուանձաեանցի երկերը՝ կոկիկ ժողովածուների

ձեռով, ուր բաղմաստեակ աղբազրական նիւթերը՝ շնորհիւ իրան ծրագրողին միայն յատուկ ոճին, կենդանի կերպով կապւած էին իրար հետ և մի սիրուն ամբողջութիւն կազմոււմ,—մի երևոյթ, որ դեռ տեսնւած չէր մեղնոււմ *): Հայ ժողովրդական կեանքի խորին հմտութիւնը, աղբազրութեան համարեա ամեն մի նիւզին վերաբերեալ նոյն նիւթերն ու նկարադիրները, ժողովրդի անպահոյն, բայց բարոյապէս առողջ կեանքին ցոյց աւած անկեղծ համակրանքը, գրականական խոշոր տաղանդը, որ փայլում էր նրա գրւածքների ամեն մի տողում,—այս բոլորը միացած դողաբիկ լեզուի և նուրբ ճաշակի հետ՝ զօրեղ տպաւորութիւն գործեցին ընթերցող հասարակութեան վրա: Հայ աղբազրութեան անսպառ հարստութիւնը, նիւթեր հաւաքելու անհրաժեշտ կարևորութիւնը, նրանցից սպասելիք բարոյական, գործնական և դիտական օգուտը՝ յատկապէս աղբաչին ինքնաճանաչութեան տեսակէտից՝ առաջին անգամ շոշափելի կերպով պարզեց: Հայ աղբազրութիւնը նոր շունչ առաւ: Սրուանծեսանցը օրինակ դարձաւ՝ առաջացնելով մի շարք հեաւոյներ, որոնցից ամեն մէկը եռանկով գործի ձեռնարկելով՝ աշխատեց իր ուսումնասիրած դիւլի, քաղաքի, գաւառի մասին աղբազրական տեղե-

*) Այսպէս էին «Գրոց ու բրոցը», «Մանան», «Համով-հոտով» և այլն (1874-84 թ թ., Կ. Պոլիս): Դրանցից առաջնի բովանդակութիւնը կարելի էր ամփոփել հետևեալ կէտերում. 1. դիտողութիւններ և նկատումներ հայ ժողովրդական լեզուի անբաւ ձոխութեան մասին (էջ 1—36), 2. ժող. աւանդութիւններ (36—42), 3. ժող. հաւատք (42—126), 4. մի թանկազին նմուշ ժող. վէպի—«Սասունցի Դաւիթ» կամ «Միէրի Դուռ» (127—183):—«Մանան» աւելի ձոխ է նիւթերի տեսակներով. 1. կենցաղ և զբաղմունք (էջ 1—70), 2. սովորոյթ, նախապաշարմունք, զրոյցք (70—147), 3. Հէքեաթ—9 հատ (147—234), 4. Երգեր ժող., ասացուածք, հանելուկ, առակ, առած, ծածկաբանութիւն (235—330), 5. Դիւթնութիւնք, բժժանք, հաւախօտութիւն (330—339), 6. Ժամանակազրականք (339—398—խակապէս անտեղի այս ժողովածուի համար), 7. Ժող. բառարան—ա, ընդհանուր, բ, բոյսերի անուններ, գ, սայլի մասերը, դ, երկրագործական գործիքների անունները (400—456):—«Համով-հոտով»—1, Վասպուրական աշխարհ (իւր շրջագաններով)—երկրի և բնութեան նկարագիր (էջ 29—76), 2, Նոյն աշխարհի բնակիչների կենցաղ և զբաղմունք, վիճակագրութիւն և այլն (76—117) 3, Հէքեաթ—27 հատ (117—263), 4, ժող. երգեր պարերդ, անտուններ և այլն (264—347), 5, ժող. բառարան (348—884):

կութիւններ և նիւթեր յոյս ընծայել: Սրանցից՝ 1875—1887 թ. շրջանում, չիշելու է՝ Տանկահայերից—Ալլահվէրդեանին (Ուլ-նիա կամ Զէյթուն), Կալիոկեցուն (Ասիական ճանապարհորդութիւն ի հայս), Ճուլարտեանին (Առաժք աղգայինք), Միրախորեանին (Նկարադրական ուղեորութիւն ի հայաքնակ դաւառս արևել. Տանկաստանի), Շէրենցին (Վանայ սաղ), Պարտիզակցուն (Խօսք զհայրենեաց), Տէվկանցին (հայերգ) և այլն. Ռուսահայերից—Բաստամեանին (Մխիթար Գօշի դատաստանագիրքը, Յառաջաբան), Մ. յ. Բարխուդարեանին (Արագը տարին կտարի, Պլլը Պուղի), Շահնապարեանցին (Ըրլըցէ կնանոց պէնր-փէշակը), Նաւասարդեանցին (հայ ժող. հէքեաթներ, հայ ժող. աւանդութիւններ), Ռ. Պատկանեանին (Ախտամերկեանի պատմածները Նոր-Նախիջևանի ոճով, Նոր-Նախիջևանի քնար և այլն), Բ. Պատկանեանին (Изслѣдов. о діалектахъ армянск. языка, Матеріалы для изученія армянск. нарѣчій, вып. 1 и 2), Սարգսեանցին (Ազուլեցոյ բարբառը), Սեդրակեանցին (Քնար Մշեցոյ և Վանեցոյ), Տէր-Աղէքսանդրեանցին (Թիֆլիսեցոյ մրտաւոր կեանքը) և այլն: Սրանց կցելու է և սողերս դրողի մի-երկու ուսերէն գրածքը հայ ժողովրդական վէպի և հէքեաթի մասին դեռ 1881 և 1885 թթ. (Образчикъ армян. народн. эпоса—«Давидъ Сасунскій», Общій очеркъ народ. арм. сказокъ), որոնք իրանց ժամանակ թարգմանեցին դերմաներէն («Armen. Bibliothek») և մէկը՝ հայերէն («Արևելք» թերթում):

Արդարև, Սրուանծտեանցի շնորհիւ կենդանութիւն առաւ հայ ժողովրդական կեանքի—հայ Փօլկլորի ուսումնասիրութիւնը: Բայց միևնոյն ժամանակ պէտք է խոստովանել, որ այն ժամանակաւ բոլոր կատարածը՝ հայ ազգագրութեան շատ աննշան մասն էր և այն՝ նկատելի թերութիւններով հաւաքած նիւթերի թէ՛ քանակի, թէ՛ որակի և թէ՛ տեսակների կողմից: Բացի դրանից՝ լոյս տեսած ժողովածուների մէջ չը կար որոշ կարգ՝ դասակարգութիւն. յաճախ նիւթերը կուտակւած էին անանց սխտեմի: Հաւաքողներն էլ շատ էին սարբերում մէկը միւսից իրանց ոճով, ընդունած ձևերով, նիւթերի կարևորութեան տեսակետով. ամեն մի սիրաբան իր սեփական հայեացքն ունէր և

սարկալի մասին, իր նաշակը. միատեսակ և որոշ ուղղութիւն չը կար և չէր էր կարող լինել: Ամենքն էլ Սրուանծտեանց չէին, որ կարողանալին սրա պէս գրաւել ընթերցողի ուշքն ու միաբը՝ ինչ նիւթի մասին և ինչպէս էլ խօսելիս լինէին: Անհրաժեշտ էր ուրեմն մի անգամ ընդմիջտ ճշտիւ որոշել ազգաղութեան այլ և այլ ճիւղերի նշանները, որոշ սիստեմ և կարգ մտցնել կազմուղ ժողովածուների մէջ և միատեսակ կամ նման ձգաումների ու նպատակների ծառայեցնել նրանց, որպէսզի հնարաւոր լինէր հաւաքելիք նիւթերը յօդուտ գիտութեան շահագործել: Իսկ դրա համար պէտք էր մի հրահանգ կամ առաջնորդ, որ ուղղութիւն տար հայ ազգաղութիւնով զբաղւողներին. այդ՝ ծրարդի պահանջն էր՝ ծրարդի, որը բացակայում էր մեզնում:

Այս նպատակով տողերս զրոյր կազմեց և հրատարակեց 1887 թ. մի «Ծրարդի հայ ազգաղութեան և ազգային իրաւարանական սովորութիւնների»—հարցերի ձեռով, որոնց թիւը 500-ից աւելի էր (115 էջ): Նրա ազգագրական մասը բաժանւած էր հետեւեալ դուխների. 1, Աշխարհագրական և պատմական տեղեկութիւններ քննելի դիւղի, դաւառի, երկրի մասին. 2, Մարդաբանական տեղեկութիւններ. 3, Բնակարանը և իր պարագաները. 4, Զդեստ և զարդ. 5, Կերակուր և խմելիք. 6, Կենցաղ և զբաղմունք. 7, Ընտանեկան բարք ու սովորութ (ութ ստորաբաժանումներով). 8, Հաւատք (ութ ստորաբաժանումներով). 9, Լեզու, գիր, արւեստ, ձեռագիրներ (չորս ստորաբաժ.). 10, Ժողովրդական բանաւոր դրականութեան տեսակները: — Իրաւաբանական մասը բաժանւած էր երեք գլխի՝ պատշաճաւոր ստորաբաժանումներով. 1, Հասարակական կացութիւն և վարչութիւն, դատ և պատիժ. 2, Քրէական իրաւունք: — Բուն հարցերից զատ՝ շատ անգամ նրանց ներքեւ տեղաւորւած էին կարճ ու ընդարձակ Ժանօլո-լի-նիէր, որոնց նպատակն էր աւելի որոշ բացատրել այս կամ այն հարցի մանրամասնութիւնները, նրա մասին պահանջելի պատասխանը, ցոյց տալ նրա կարեւորութիւնը և՛ պատշաճաւոր օրինակներ բերելով՝ թէ՛ դիւրացնել բանահաւաքի աշխատութիւնը և թէ՛ աւելի գիտնաւոր դասաւորութիւն տալ հաւաքելի նիւթերին:

Կարծում ենք անօգուտ չի լինի յառաջ բերել այստեղ՝ մի քանի աննշան փոփոխութիւններով՝ ան, ինչ որ 20 տարի սրանից առաջ ստել էինք մեր «Մրադրի» յառաջաբանում հայ ազգազրութեան կարևորութեան մասին, քանի որ նոյն խնդիրը այժմ աւելի ևս շտապ է և ստիպողական, ուստի՝ ըստ Գէօթէի, սմենամեծ կարևորութիւն ունեցող բաները կրկնելը երբէք աւելորդ չէ:

Յայտնի է, որ XVIII դարում, երբ սկիզբն էր դրւում լեզուների, կրօնների, ազգերի կենցաղի համեմատական ուսումնասիրութեանը, ծագում է և «պագրո-լի-ն» (էթնօգրաֆիա) խօսքը և փորձեր են կատարւում շահագործելու ազգազրական նիւթերը պատմութեան սահմանները ընդլայնելու և աւելի խոր ըմբռնելու մարդկային ոգու, մարդկային կոյլտուրի, մարդկային ընկերութեան զարգացման աստիճանները: Առանձին կարևորութիւն և կանոնաւոր ընթացք ստանալով Արևմտեան Եւրոպայում՝ մանաւանդ XIX դարու առաջին քառորդում, ազգազրութիւնը մի 50—60 տարւայ միջոցում զարմանալի յառաջադիմութիւններ է արել արդէն: Ազգակցութիւն ունենալով մի կողմից Բնագրո-լի-ն հետ (ազգազրութեան կամ ազգաբանութեան—էթնօլոգիայի միջոցով) ազգազրութիւնը *) միևնոյն ժամանակ պատմական Գրո-լի-ններէ շարքին է պատկանում: Մինչդեռ ազգազրութիւնը *) ուսումնասիրում է ազգերի ցեղական տարբերութիւնները՝ մարդկային սեռի տեղազրական տարածման հետ միասին, նրա ծագումը, բնակավայրը և նրա Ֆիզիքական կեանքը պայմանաւորող նիւթական պարագաները, — ազգազրութիւնը իր ուսումնասիրութեան առարկան չէ սահմանափակում ազգերի կեանքի ֆիզիքական երևոյթներով միայն, այլ դիտում ու քննում է նաև նրանց հոգեկան շարժումներն ու արտայայտումները. նա հետազօտում է մարդկութիւնը կազմող ազգերի առանձնապատկութիւնները, ջանք է անում նաև:

*) Ծանօթ են «Ազգազրութիւն», «Ազգաբանութիւն» և «Ազգազրութիւն» տերմինների մասին եղած վէժերը և առարկութիւնները մասնագէտների մէջ. յամենայնդէպս դրանց ամեն մէկին յատկացնելիք նշանակութիւնը պայմանական է եղած մինչև հիմա: «Ազգազրութիւն» խօսքը մենք աւելի լայն իմաստով ենք ընդունում: Հմմտ. վերը, էջ 1—3:

չել ազգային ուղին, որ երևան է զայլա լեզւի, հաւատքի, բարք ու սովորութի, ժողովրդի անարւեստ բանաւոր զրահանութեան որպէս և նրա իրաւարանական սովորութիւնների մէջ: Մի խօսքով ասած՝ նա նպաստում է ամենապօրեղ կերպով ազգային ինքնաճանաչութեան յառաջանալուն և զարգանալուն:

Հասկանալի է ուրեմն՝ թէ՛ որքան կարևորութիւն ունի ազգազրութեան ուսումնասիրութիւնը, որի հետ սերտ կապւած է և մարդաբանութեան (անթրոպօլօգիայի) և կոյլտուրի, և լեզւադիտութեան, և դիւցարանութեան, և ժողովրդական զրահանութեան, և սովորութեան իրաւունքի յառաջադիմութիւնը: Այդ մեծ կարևորութիւնը ունի մասնաւանդ մի հին կոյլտուրական ցեղի ազգազրութիւնը, ինչպէս Հայերինն է:

Այսպէս՝ հաւաքելիք ճարտաբանական տեղեկութիւնները Հայերի մասին միշտց կընծայեն հայկական ցեղի այլ և այլ իրարից տարբեր տիպերը դիտնականօրէն ուսումնասիրելու և դուցէ պարզելու նախնական եկամուտ խառնուրդների հետքերը, որպէս և մեղ ցեղակից ենթադրւած հնադոյն մի քանի ազգերի հետ (Հատեան, Ուրարտեան, Փռիւդական) որոշ կապ կամ ազդակցութիւն հաստատելու, որ մեծ նշանակութիւն ունի մեր հնագիտութեան և պատմութեան համար:

Տան, բնակարանի, շինութիւնների այլ և այլ տեսակները ուսումնասիրելով՝ հետաքրքրական նիւթ կը մատակարարւի բնդհանուր ճարտարապետութեան պատմութեան համար, իսկ զգեստի զանազան տեսակների, ռոնամանի, անդւածների կամ զործածքների որպէս և այլ և այլ քարի, փայտի, կաւի, պղնձի ամանեղէնների և հին գործիքների ու զէնքերի նկարազրութիւնները՝ բացի ազգային կոյլտուրի լուսարանելուց, կը ծառայեն և բնդհանուր իշխութեան խնդիրներին:

Յայտնի է, որ ազգային ինքնաճանաչութեան ազդակներից մէկը լեզուն է. ուստի հայ լեզւի և մասնաւորապէս բուն ժողովրդական բարբառների մասին հաւաքելի նիւթերը լայն ասպարէզ բաց կանեն հետաքրքրելի լեզւագիտական համեմատութիւններին, կը նպաստեն մեր դասական լեզւի պատմական ուսումնասիրութեան, կը պարզեն մեղ բարբառների մէջ գուցէ սակաւին թաղնւած հայ ազգի ցեղական յատկանիշները, լեզւի

մէջ մտած այլ և այլ օտար ասարներ ու փոխառութիւնները, կը լուսաւորեն աշխարհիկ լեզւի ծագումը, զարգացման աստիճանները, նրա կրած օտար ազդեցութիւնները և այլն:

Բաղմաթիւ և պէս պէս ծէսերի, հաւատալիքների ու սնապաշտութիւնների հաւաքումը նոր լոյս կը սփռէ մեր վաղեմի նախնիքների աշխարհայեցողութեան վրա. իսկ դիւցաբանական վէպերը, աւանդութիւնները և առասպելները, որոնց մէջ թէև ազօտ, բայց պահպանւած են անշուշտ ժողովրդի շատ հեթանոսական հայեցածքներ, — թանկագին նիւթեր կը մատակարարեն հայ դիւցաբանութեան, որը այնպէս միակողմանի ուղղութիւն է ստացել և այնպէս քիչ է մշակւած: — Մի բան յամենայն դէպս անտարակոյս է, որ պարսկական կրօնքից զատ, որը ընդհանրացած էր մանաւանդ հայ ազնւոպետական դասակարգում և որի մասին է որ բացառապէս խօսում են մեր հին մատենագիրները, — չայստանում կար և բուն ազգային-ժողովրդական կրօնք կամ հաւատք՝ տարբեր առաջնից, և սրա հետքերը դուցէ որոնելու է դեռ հատ ու կտոր պահւած առասպելական էակների և չար ու բարի ոգիների մէջ, ինչպէս՝ Մհեր, Շիդար, Քաջը, Շուոտ, Թուխմանուկ, Առլէզ, Ալ կամ Ալք, Խօխ կամ Խօխօճ, չամպերտը, Խպլիկ, Վշտիկ, Մմալ և ուրիշ շատերը:

Անյիշելի ժամանակներից ժողովրդի բերանում շրջող երգը, հէքեաթը, հանելուկը, առածը և այլն, արդարև դարերի ընթացքում փոփոխելով, բարդելով, ձևակերպելով, բայց և միշտ հաւատարիմ յայտարար հանդիսանալով ազգային կեանքին, ժողովրդի ձգտումներին և իզէպներին, — մի կողմից հաստատ հիմք կը դնեն մեր խոլովրդական գրականութեան և միւս՝ առատ նիւթ կրնծայեն եւրոպական և ասիական ազգերի համանման բանահիւտութեան տեսակների համեմատական ուսումնասիրութեան:

Վերջապէս, ժողովրդի բարոյականութեան մասին ունեցած գաղափարը, իրաւունքի և պարտականութեան սկզբունքը, նրա դատական և վարչական սովորութիւնները, սրբարութեան մասին դարերով կազմած նրա սեփական հայեցածքը, նրա անդիր օրէնքը, — այս բոլորը խիստ հետաքրքրական արտայայտումներ են մեր ազգի իրաւաբանական կեանքի, և սովորութեան նրա հետ կուլւած գիտութիւնն են կազմում, որը՝ բացի գիտնականից —

իրև նիւթ նախնական իրաւունքի, մեծ գործնական նշանակութիւն էլ ունի այժմ հասարակական և վարչական տեսակէտից:

Այս բոլորը մասնացոյց անելուց յետոյ, հարկաւոր է արդեօք լիշել, թէ որքան մեծ լարոյական պարտականութիւն է ծանրանում ամեն մի կրթւած և բարձր ուսում ստացած հայ մարդու վրա՝ ազգազրութեան նիւթեր հաւաքելու և կամ իւրովսանն այդ գործին նպաստելու. հաւաքելը անհրաժեշտ է և պէտք է ժամանակ կորցնել: Արդարև, Ժողովրդի խօսքն ու բարբառը, հին ծէսն ու սնապաշտութիւնը, առասպելական վէպն ու աւանդութիւնը, հին երգն ու խաղը, հէքեաթն ու առածը և շատ ազգային իրաւարանական սովորութիւններ («մեծամեաց դիրք») — մեր աչքի առաջ պահասում, նւազում, մաշում; արհամարհանքի կամ մոռացութեան են տրւում ու հետզհետէ անհետանալու վիճակին մօտենում, շվեւելով ու ընդհարւելով նորածնութիւնների հետ, կեանքի նոր դադախարների ու պայմանների հետ, դրաւոր օրէնքի հետ, նրանց հոսանքին չը դիմանալով և նրանց տեղի տալով: Կանցնի շատ-շատ՝ մի կէս դար, և այդ՝ մեր պայպերից աւանդած հապարաւոր սարիների՝ շատ կողմից թանկագին կտակը կը կորչի անդարձ, եթէ օրով յառաջ հող չը տանենք խնամքով արծանագրերու նրան և պահպանելու դիտութեան համար: Եւ մեր այսպիսի անփութ վերաբերութեան համար անվերջ պէտք է նախատեն ու դատապարտեն մեզ դալով սերունդները...

Բարեբաղդաբար մեր այս ծրագիրը աննկատելի չանցաւ հայ ազգազրութիւնով զբաղւողների կողմից և ունեցաւ իր ազդեցութիւնը ոչ միայն բանահաւաքների թիւը զգալի կերպով աւելացնելով, այլ մասնաւոր նրանց աշխատութիւններին որոշ սիստեմ և դիտնական դասաւորութիւն հաղորդելով: «Մրադիրը» շուտով տարածեց. Պօլսի «Արևելք»-ը (1889) նոյնիսկ ամբողջ հատածներ արտատպեց նրանից: Միւսնոյն ժամանակ ոչ միայն շարունակեցին հայ ազգազրութեան այլ և այլ ճիւղերից նորանոր երկեր լոյս տեսնել պարբերական թերթերում և առանձին գրքովներով, այլ կարճ միջոցից պահանջ զգացեց մասնագիտական հիմնէսներ հիմնելու: Այսպէս, Ս. Գուլամիրեանց

ձեռնարկեց 1887 թ. հրատարակել Պետերբուրգ Արատ արտակերպարդ հանդէսը, Երուանդ Լալայեանի ջանքով առաջացաւ Թիֆլիսում 1896 թ. Աղագարախան ճանդեար, որ շարունակոււմ է մինչև այժմս, Գ. Անդրէասեանի և Դ. Խաչկոնցի ղեկավարութիւնով Պօլսի ժանօթ Բիւրօն շարաթաթերթը 1897-ից նոր շրջան բացեց յատկապէս հայ ազգադրութեան նւիրած, սողերս զրօղի խմբադրութիւնով 1901-ից սկսեց հրատարակել Մոսկուայի Լազարեան ձեմարանում Էմիլեան աղագարախան ժողովաթոն:

Այդ շրջանում՝ այսինքն 1887 թ-ից յետոյ լոյս տեսած բաղմաթիւ աշխատութիւններից, յիշելու է մանաւանդ՝ Կ. Կոստանեանցի մի շարք Միջնադարեան հայոց ստղեր և ոտանաւորներ, ձանկեանի հնութիւնք Ակնայ (ուր և սքանչելի անտուններ), Զօպանեանի Նահապետ Քուչակը, Պօտուրեանի Կոստ. Երզնկացին, հանդուցեալ Գ. Հախիբեղեանի հաւարած և «Աղագար. ճանդիսի» ջանքով հրատարակած հայ աշուղները, Զիււնու և այլ մի քանի աշուղների երգերը, Ն. Մառի ուսերէն ընդարծակ ուսումնասիրութիւնք Վարդանի առակների մասին, նոյն հրատարակութեան նւիրած Կ. Տաշեանի մանրակրկիտ դրախօսութիւնք «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ, Ա. Արեղեանի, Գարեղին սարկաւազի, Բազրատ Խալաթեանցի և Ս. Հայկունու գրի առած «Սասունցի Դաւիթ» վէպի վարիանտները, սողերս զրօղի ուսերէն հետազօտութիւնք՝ «Հայոց վէպը Մ. Խորենացու Պատմութեան մէջ», Մ. Արեղեանի հայ ժողովրդական առապելները, Յ. Աճառեանի և Լ. Մսերեանցի բարբառադիտական ուսումնասիրութիւնները և այլն և այլն:

Պարբերական թերթերից այդ միջոցում՝ պատկառելի Բազմալէպը՝ հակառակ իր նախկին ծրագրին, պակաս է տեղ տալիս իր էջերում հայ ազգադրութեան՝ աւելի ծանրանալով գրակաւնութեան միւս ճիւղերի վրա: Այսպէս՝ գոնէ մի տասնեակ տարւայ ընթացքում (1894—1904), եթէ չը հաշւենք Ալիշանի «Հին հաւատքը» և «Հայ-Վեները» և Գեղցերի հայ Դիւցաբանութեան թարգմանութիւնք, հալիւ մի քանի համառօտ հատւածներ կը գտնենք այս ամադրում մեղ հետաքրքրող առարկայից: Ալիշանի «Կամենիցը» սկսեց լոյս տեսնել 1895-ին:

Այլ էր Վիեննայի Հանդէս Աճաօրեայն, որը իր լոյս տեսնելու օրից (1887 թ.) լուրջ ուշադրութիւն դարձրեց հայ ազգադրութեան վրա՝ բառիս լայն առումով, տեղաւորելով մի կարգ ընդարձակ և մանրամասն հետազոտութիւններ, որոնք յետոյ առանձին զբոյցներով հրատարակեցին («Ազգ. Մատենադ.») շարքում: Այսպիսի են՝ Գալէմբարի ուսումնասիրութիւնը Լեհահայոց Դատաստանազրոյն, Տանի՛ Արևելեան Հայք ի Պուքովինա, Տրվլէ և Փիտոնի՛ Ուղևորութիւն ի Փ. Ասիա, Գովրիկեանի՛ Հայք յԵրեստեթուպոլիս, Նորին՝ Դրանսիականիոյ Հայք, Տէր-Մովսէսեանի՛ Հայ գիւղական սոււնը, Տոմաշէկի՛ Սասուն և Տիգրիսի աղբւրաց սահմանները, Յովնանեանի՛ Հետազոտութիւնը նախնեաց ռամկօրէնի վրայ, Լ. Մսերեանցի՛ Հայ բարբառադիտութիւնը, Քօսեանի՛ Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, Գաղանճեանի՛ Եւգոկիոյ բարբառը, Տաշեանի՛ արդէն յիշած Ժողովածոյք առակաց Վարդանայ (ըստ Մառի), Նորին՝ Խիկարի մասին, Բագրատ Խալաթեանցի՛ Հայ Ժողովրդ. գիւցազնական վէպը, Կիլիսերեանի՛ Ծովք, Ծովք-Տլուք և Հոռմկլայ, Պեղերարնի՛ Նպաստ մը հայ լեզուի պատմութեան և այլն:

Աւելի մանրամասն պէտք է կանգ առնել լիշեալ մասնագիտական հանգէսների գործունէութեան վրա:

Արատաբ, որը՝ դէպ լինի ասել, միակը հայ թերթերից ընդարձակ զբախօսական նւիրեց մեր («Մըազրին»), իր տասներեք տարւայ գոյութեան ընթացքում տալով 13 սիրուն հատորներ (10—14 տպ. թերթ ամեն մէկը)—իսկապէս աւելի ազգագրական հրատարակութիւն էր, որովհետև նիւթերի մեծագոյն մասը այդ նիւղին էր նւիրւած և այն՝ առաւելապէս Տաճկահայ զաւառներին. իսկ ամեն տեսակ տիպեր, նկարներ, պատկերներ և տեսարաններ, որոնց զարմանալի նրբութիւնով և դեղարևատական ճաշակով տեղաւորում էր խմբագիրը իր հանդիսում, աւելի զնահատելի էին զարձնում ազգագրական ուսումնասիրութիւնները: Մենք կը նշանակենք այդ ուսումնասիրութիւններից կարևորները. — տեղադրութիւն՝ Խարբերդ զաւառի (Աշ. Աւ.), Կիլիկոյ (Արմէն), Ատանայի (Ասլան), Այրնթապի (Վարդ), Այրնթապի հայերէն բառերէն (Պերճ)—«Արաբս», 1888, Բ. դիրք.—Այրնթապի հին սովորոյթներ (Պերճ),

Հոսմկրայ և շրջակայք (Արմէն), Մարաշ (Կիլիկեցի), Նանքնոյ լեզուն (օր. Պոյսեան), Եւգոկիա դաւառ (Ուսումնասէր)— 1889, Ա.—Տեղադրութիւն Եւգոկիոյ (Հոգ.), Նմուշներ Մարաշու բարբառին 1889, Բ.—Մուշ (Այկնօէս) — 1890, Ա.—Ամասիա (Լումէն)—1890, Բ.—Մի հայաբնակ զիւղ Ղազախում (Բ. Թումանեանց)—1892, Ա.—Սասուն—1894-5, Ա.—Կերասուն. Ալն, Բալու—1894-5, Բ.—Վան, Վարադ, Աղթամար—1898 Ա.:

Ազգագրական հանդէսը, որ սկսեց հրատարակել երկհատոր ժողովածուի ձևով 1896 թ. և մինչև այժմ 15 սուար դիրք է յոյս տեսել (27—34 տպ. թերթ ամէն մէկը, վերջերս եռամսեայ լինելով՝ 12—14 թերթ), պարունակում է իր մէջ արդէն բացառապէս մասնագիտական նիւթեր՝ առանձին խնամքով հաւաքուած և կարգի բերած: Իր ծրագրի կողմից Նանդէսը կարելի էր բաժանել երեք շրջանի. առաջինը՝ 1896—1900 թ., ուր ամեն մի գրքում ղետեղած է մէկ-մէկ հայ դաւառի աղագրական նկարագիր և բաւականաչափ թարգմանութիւններ եւրոպական մասնագիտական գրականութիւնից, ինչպէս, Պեարիի և Կանէսարինի մարդաբանութիւնից, Լլատուճոյի և Պօղօզայի աղագրութիւնից, Ռատցելի աղագրութիւնից, Կօնաի սոյիօլօղիայից և այլն: Երկրորդ շրջանում՝ 1900—1903 թ., նկարագրուած հայ դաւառների թիւր հետզհետէ աւելանում է ամէն մի գրքում և՛ ընդհակառակը, նւաղում են թարգմանութիւնները. միևնոյն ժամանակ՝ ինչպէս և առաջին շրջանում, պակասաւոր են ինքնուրոյն գիտական և քննադատական ուսումնասիրութիւններ: Երրորդ շրջանում՝ 1904—1907 թ., շարունակում է հայ դաւառների նկարագրութիւնը նոյն չափով և սկսում է ինքնուրոյն հետազօտութիւնների մի շարք մանաւանդ հայ Փօլլիօրից և հայոց իրաւունքից, որով Նանդէսը աւելի աշխոյժ է դառնում:

Բուն հայ աղագրութեան համար. առանձին կարևորութիւն ունին Երուանդ Լալայեանի հայ դաւառների մանրակրկիտ, շատ ընդարձակ և զարմանալի խղճմտաւոր՝ գուցէ փոքր ինչնցամաք, նկարագիրները, որոնց ինքը աղագրիրը՝ ամէն զրկանք երբեմն և վտանգ յանձն առնելով՝ իբրև գործին սիրահար, — անձամբ այցելել է և աեղնուտեղը ուսումնասիրել: Այսպէս են՝

Զաւարքի, Վարանդայի, Սիսիանի, Զանգեզուրի, Գանձակի, Բորչալուի, Նախիջևանի, Շարուր-Իարալազեազի, Վայոց Ձորի, Նոր-Բայազէդի ազգազրական ուսումնասիրութիւնները, որոնք առանձին վերցրած մի քանի սուար հատոր կը կազմեն և որոնց նշանակութիւնը ըստ արժանւոյն դեռ գնահատուած չէ: Իրանք՝ այդ ուսումնասիրութիւններն են հանդէսի ծանրութեան կէտը: Այնպէս բազմակողմանի և լիուլի նկարագրութիւնն ո՞րեւէ Կովկասեան հայ դաւառի, ինչպէս տալիս է Լալայեան, դեռ տեսնուած չէ մեղնում. նա առաջ է բերում ոչ միայն զուտ ազգագրականը՝ Փոյլլորի հետ միասին, այլ նաև ճարտարաբանական, պատմական, մանաւանդ քննադրական (երկրի նկարագիր—լեռներ, շրեր, կլիմայ, համբեր, Փյօր, Փատուն) և փեղագրական (դաւառի վարչական բաժանում, դիւղեր, վանքեր, վիճակագրութիւն, քարտեզ) մանրամասն տեղեկութիւններ, թէև՝ բնականաբար, բոլոր բաժինները չեն մշակուած հաւասարապէս: Իսկ վերջերս սրանց վրա աւելացնում է նա և շատ թանկագին նիւթեր՝ վերաբերեալ մեր երկրի հնագիտութեան (բոսնի իրեր՝ զէնք, զարդ, ձիուսարք, խեցեղէն, կարասի դադաղներ, զանգեր և այլն հնագոյն բնակիչներինց մնացած, որոնք ձեռք են բերուած իր իսկ պ. Լալայեանի, անխոնջ անձնական պեղումներով: Այս մեծ ծառայութիւն է դիտութեան առաջ, որ պէտք է շեշտուի:

Ծրագիրը, որով առաջնորդուել է Ե. Լալայեան իր ազգազրական ուսումնասիրութիւնների մէջ, եղել է միշտ մեր վերը լիշածը՝ այսինքն «Ծրագիր հայ ազգազրութեան», որը նա լիապէս և արդիւնապէս շահադործել է և ուրիշներին էլ նույնն է յանձնարարել: Այսպէս՝ ամեն մի դաւառի նկարագրի համար, նա դնում է նախ տեղեկութիւններ տեղազրական, վիճակագրական և այլն, յետոյ դիտելիք դրացի ազգերի մասին և ապա արդէն ըստ կարգին՝ բնակարան, զգեստ ու զարդ, կերակուր և խմելիք, կենցաղ և զբաղմունք, բնասանկան բարք և սովորոյթ, հաւատք, գիր, արուեստ, ձեռագործներ, և՛ վերջապէս, ժողովրդական բանաւոր գրականութիւն: Տեղ-տեղ՝ նպաժ նիւթերին, այս ծրագիրը երբեմն ընդլայնուած և երբեմն կրճատուած էր:

«Ա. հանդէսի» խմբագրի աշխատութիւններից յետոյ պէտք է լիշել՝ Ն. Նախիջևանի նկարագրութիւնը (Ե. Շահագիրի), որպէս

և մի շարք անսովորական անաւելյալէս ժողովրդական գրականութեան վերաբերեալ, օրինակ՝ Սուրմայուլի, Լուսայ, Շիրակի, Բուլանրիսի, Ալաշկերտի, Բասէնի, Համշէնցի և Պօլսեցի հասերի մասին:

Ինքնուրոյն հետազոտութիւններից նշանակելու է՝ Ա. Արեղեանի յօդածները ժող. դիւցազներգութեան մասին, Մ. Արեղեանի Հայոց վէպը, Գարեգին սարկաւազի Ռուստամ Զալը, Սամուէլեանցի մի շարք ուսումնասիրութիւնները հայ իրաւունքի և ժող. իրաւաբանական սովորութիւնների մասին և այլն: «Ազգ. Հանդէսի» շատ յօդածները՝ մանաւանդ Ե. Լալայեանի, դարդարած են պատկերներով՝ աւելի աչոյ վերջին տարիներում. կան և խնամքով կազմած քարտէզներ: Ինչ որ թերի է եղած «Ազգ. Հանդիսում»՝ այդ Հայ ազգագրութեան մատենախօսական բաժինն է: Իր աշխատակիցներին և ընդհանրապէս հետաքրքրողներին առաջնորդելու դիտմամբ՝ նիւթեր հաւաքելու ժողովրդական կեանքից—«Ազգ. Հանդէսը» տեղաւորում էր և մասնաւոր ծրագիրներ, օրինակ, Զէլինսկու՝ Տղաբերքի և նորածին մանկան դաստիարակութեան մասին, Դիրրի՝ Սեփականութեան նշանների մասին, Կարա-Մուրզայի՝ Ոստայնադրժութեան մասին և այլն:

Երրորդ մասնադիտական թերթը՝ Բլ-բալն-ը, օգտւելով այն յարմարութիւններից, որ ընծայում են՝ մի կողմից հայաշատ Պօլիսը իբրև մտաւոր կենդրոն և միւս՝ բազմաթիւ զաւառական հայ գրադէտները և սիրաբանները,—շատ աչոյ կազմակերպեց իր ազգագրական բաժինը՝ այնպիսի առատ և պէս-պէս նիւթ հասցնելով իր ընթերցողներին, որի նմանը հազիւ թէ եղած է մեզնում: Մենք նկատի ունենք թերթի յատկապէս 2—3 տարւայ հրատարակութիւնը (1897—1902), որից յետոյ, կարծեօք, արտօնատէրը փոխել է իր շաբաթաթերթի ուղղութիւնը: Զրկյալ հայ դաւառ կամ քաղաք, որի մասին չը լինէր որևէ նկարագիր ազգագրութեան այլ և այլ ճիւղերից, թէև այդ նկարագիրները չէին կարող թերթի ծաւալի համեմատ, շատ էլ ընդարձակ լինել: Մի զաղափար տալու համար (որովհետև շատ երկար կը լինէր միառմի թւել բոլոր այն բովանդակութիւնով յօդածները)՝ բաւական է վերցնել Բիւրակնի առաջին 18 հա-

մարները. այդտեղ կը գտնենք—Մշեցի կիւր (ազգազրակ. նկարադիր), Տէրնդասը Բղիի մէջ, Պարերզ Մշեցոց, Պարերզ Բղիի բարբառով, Բղեցոց առակներ, Երզնկա գաւառ (ազգազր. նկարադիր), Էրզրուծի առածներ, Առածներ Տիարպէթիի բարբառով, Սիրերզ Հլւսէջնիի և Խարբերդի բարբառով, Հարսանեաց երգեր Ակնայ բարբառով, Մենդեան աօնը Խիանի մէջ, Եղեսիօյ ամուսնական կեանքէն, Մեծ պասը Բաղէշուժ, Բաղէշի պարերզ, Զրապաշտութիւնը հայոց մէջ և Թուխ-մանուկներ, Անտունի և աղօթքներ, Օրօրօցի երգ, Հայ աշուղներ և ժողով. երգիչներ:

Հետաքրքրական է, որ «Բիւրակնում» իսկառաջին փորձերն են կատարուած գիտնականօրէն մշակելու նիւթերը և ինքնուրոյն ըննական ուսումնասիրութիւններ կամ «վերլուծումներ» անելու: Այսպէս՝ Բարդէն վարդապետի Մուկը կրօնի մէջ, Խաչկոնցի՝ Աւլէյները և բարելական Մարգուկը, Ադամամութի վերլուծումը, Մութ աշխարհի վերլուծումը, Ռոյմէրի՝ Հոգեյածութեան դադափարը Հայոց մէջ, Մուշեղ վարդապետի՝ Երզը իբրև հոգեկան պէտք (շատ ընդարձակ) և այլն:

Միևնոյն ժամանակ խմբադրութիւնը շոնք էր անուժ վեկավարել իր աշխատակից գաւառացի զրոզներին և ընդհանրապէս ազգադիր բանահաւաքներին և դիւրացնել նրանց գործը՝ աճախ առաջնորդող յօդածներ տեղաւորելով. օրինակ, Անդրէասեանի՝ Որն է ժողովրդական բանահիւսութեան ճշմարիտն ու կեղծը, Ժողովրդական անդիր և զրաւոր զրականութիւն, Խաչկոնցի՝ Ժողովրդական բանահիւսութեան տեսակներն ու աղակները (շատ ընդարձակ), նոյնպէս խմբադրութեան կողմից՝ «Ծրագիր Հայ ազգադրութեան»: Վերջինս մեր վերը չիլած «Ծրագիրն» է, որի այլ և այլ բաժինները գրեթէ ամբողջապէս և բառացի արտատուած են թերթի մի շարք համարներում: Նիւթերի առատութեան կողմից Բիւրակնում միանգամայն արդարացնում էր իր կոչումը:

Զորրորդ մասնագիտական հրատարակութիւնը — Էմինէան Այգաթրական Ժողովածոն է, որ մինչև այժմ իր վեց հատորներում նոյնպէս տւել է նիւթեր զլխաւորապէս հայ Ֆօլկլօրից: Այսպէս են՝ Ա. Մխիթարեանցի Փշրանք Շիրակի ամբարներից.— ժողով. զրականութեան տեսակներ, ընտան. բարք ու

սովորութեան և Շիրակի դաւառաբարբառի բառարան: Ս. Հայկունու Հայ ժողով. վէպը (8 հատ՝ դրանց թւում և «Դաւիթ ու Մհերի») Մոկաց, Շատախի և Արարատեան ճիւղերը) և հէփփալը (մօտ 100 հատ)՝ առաւելագէս տաճկահայ այլևայլ բարբառով (2 մաս): Հր. Ս. ճառեանի թուրքերէնի աղբեցութիւնը հայերէնի վրա և թուրքերէնէն փոխառեալ բառերը՝ ընդարձակ հետաքրքրական ներածութիւնով: Ս. Հայկունու՝ Հայ-Քրդական վէպը (28 հատ) Տաճկահայ դաւառական բարբառներով, բազմաթիւ քրդական երգերով և եղանակներով: Նոյն Հայկունու՝ Հայ ժողովրդական էջֆ այլ և այլ տեսակի, առած, ասած, աղօթք, անէծք, հանելուկ, ասելուկ և այլն՝ (գրի առած մօտ 50 դաւառաբարբառով) մի ընդարձակ առաջաբանով խրմբազրութեան կողմից՝ նոյն հատորում ղետեղած նիւթերի ամեն մի տեսակի մասին:

Հարկաւ՝ վերը լիշածներով չեն սպառուում հայ ազգազրութեան խնդիրները և նպատակը. մեղանում նոր-նոր է սկսում դիտակցական վերաբերմունք դէպի այդ մասնազիտութիւնը: Ուստի յոյս դնելու է մանաւանդ սպազայ աշխատութիւնների վրա՝ անշուշտ եթէ դրանք ղեռ աւելի խոր և աւելի լայն կրնդգրկեն մեղ հետաքրքրող առարկան:

Վերջացնելով իմ համառօտ տեսութիւնս հայ ազգազրութեան պատմութեան մասին, անհրաժեշտ եմ համարում կանգ առնել մի քանի այսպէս ասած՝ քղծական կէտերի—desiderata—վրա, որոնց հետզհետէ իրադարձումը կարող է ղգալի կերպով նպաստել հայ ազգազրութեան զարգացման և նրա գիտնաւոր մշակման գործին:

1, Պէտք է շտապցնել՝ որքան կարելի է, նի-նից հա-առ-լու խնդիրը, քանի որ՝ ինչպէս արդէն ասացինք, ղեռ անհետ եղած չէ հին սովորութիւն ու նախապաշարմունքը, մոռացած չէ հին երգն ու հէքիաթը՝ ղպրօցի և լրագրութեան շնորհիւ, չէ ղուրս մղած գործածութիւնից անգիր օրէնքը—հին սովորութեան իրաւունքը—գրաւոր օրէնքի աղբեցութիւնից: Պէտք է կազմակերպել կարելոյն չափ ընդարձակ հաւաքումներ՝ ոչ պատահական ու կցկտուր, այլ սխտեմատիք և գիտական ձեւով և

այն՝ պատրաստուած անձիքների ձեռքով: Շատ աւելի լաւ, եթէ զրանք զործին սիրահար կը լինին՝ զազգափարով յափշտակուած, անձնէր մարդիկ և միւսնոյն ժամանակ օժտուած զրականական տաղանդով, որ մեծ նշանակութիւն ունի զործի աշոյղութեան համար:

2. Առանձին հոգ պէտք է տանել, որ մինչև օրս լոյս տեսած հայ ազգազրական նիւթերին կազմէն լեակապար մարտնախօսական նկարագրո-ւի-ննէր կամ դէթ ցո-ցափնէր և. հին հայ հեղինակներից, որքան էլ պակասաւոր լինեն նրանց հազորգածները, Բ. հին օտար հեղինակներից, (յոյն, լատին, ասորի, վրացի, արաբ, պարսիկ, թիւրք), Գ. միջնադարեան և նոր ժամանակի եւրոպացի ճանապարհորդներից և հեղինակներից, Դ. եւրոպական ազգերի հին ու նոր պարբերական թերթերից, Ե. ռուս զրականութեան և պարբերական թերթերի մէջ լոյս տեսածներից և առանձին լոյս տեսած զրւածքներից, Ղ. հայ պարբերական թերթերում հրատարակածներից՝ վաղադոյն սարիներից սկսած, Է. հին ու նոր հայերէն զրբերից և ժողովածուներից:—Այսպիսի մի՛ արդարև ոչ դիւրին՝ աշխատութիւն մեր կարծիքով, ձեռնհաս են յաշոյղութեամբ դուրս բերելու յատկապէս Վենետիկ և Վիէննայի պատկառելի Միսիթարեան Միարանութիւնները՝ մանաւանդ վերաբերեալ յոյն և լատին դասական և բիւզանդական զրականութեան որպէս և եւրոպական հին ու նոր ճանապարհորդներին և հեղինակներին: Սրանով հիմք կը դրէր մի տեսակ Armeniaca-ի—հայեակահի կամ՝ Ալիշանի խօսքով՝ հայ ապատումի, այսինքն ինչ որ հայերի մասին ըւրեւ և Երբեք լոյս է տեսած,—մի գործ, որ բոլորովին բացակայում է մեզնում և որի իրագործումը սակայն առաջնակարգ կարևորութիւն ունի հայ ցեղի կոչւումով, հայ պատմութեան և հայ ինքնանանաչութեան տեսակէտից:

3. Նիւթեր հաւաքելը՝ իհարկէ, շատ լաւ է և անհրաժեշտ է. բայց կարելի չէ միայն դրանով գոհ մնալ, որովհետև երբէք պէտք չէ աչքաթող անել, որ դա՛ միջոցն է և ոչ վերջնական նպատակը, դա ատաղձն է և ոչ դեղարւեստական շէնքը: Պէտք են մեզ ուսումնասիրո-ւի-ն, հեթաղօգո-ւի-ն, վերլուծո-ւի-ն, որ շատ քիչ կայ արած. այդ պատճառով էլ մեր ունեցածը հայ ազգազրութեան նիւթեր են միայն, իսկ դիտա-

կան ազգազրութիւն դեռ. չը կայ մեղնում և չի լինի, մինչև որ այդ նիւթերով՝ ոչ թէ անծնական զւարճութեան կամ հետաքրքրութեան անսովկէտից, այլ ազգային ինքնաճանաչութեան էական պահանջներին գոհացում տալու նպատակով չը դրադի զիտութիւնը և իր եզրակացութիւնները չառաջացնէ:

4. Պէտք է ամեն կերպ կենդանացնել արդէն դուրսիւն ունեցող Թիֆլիսի հայ Ազգազրական Ընկերութիւնը և նրա դաւաճական ճիւղերը՝ նոր անդամներ գրաւելով մեր ինտելիգենտներից—մանաւանդ ֆիլոլոգներից և իրաւաբաններից; որոնց է վերապահւած նիւթերի մշակման վսեմ գործը: Շատ ցանկալի է նման մի ընկերութիւն կամ գէթ ճիւղ հիմնել հէնց այժմ, առանց յետաձգելու—էջմիածնի՝ ձեմարանին կից, ուր շատ յարմարութիւններ կան, այդպիսի հաստատութեան համար, յետոյ արդէն և Պօլիս և այլ հայ կենտրոններ: Պէտք է բաւականաչափ միջոցներ գտնել վարձատրելու մանաւանդ խուլ դաւաճներում աշխատող ազգապիւրներին և քաջալերել նրանց հաւարածունները լոյս ընծայելով:

5. Հայ ազգազրութեան զարգանալուն շատ կը նպաստէին և Գիւրական արլա-անիֆելը—էքսկուրսիաները՝ խմբով, պատրաստուած անմիջնների ձեռքով, ուր ամեն մէկը իրան ստանձնած ճիւղը և զբաղմունքը կունենայ: Հարկատր է իմիչի այլոց միտ դնել և հայ ժողովրդական երաժշտութեան վրա՝ զրի առնելով հայ երգերը և ժողովրդական եղանակները նաև ծայնադրի—Փօնօզրաֆի—միջոցով:

6. Նոյն նպատակով ցանկալի էր երբեմնապէս ազգազրական համաժողովի կազմել հայ դպրոցների ներկայացուցիչներից և գործին համակրողներից Կովկասի հայաշատ կենտրոններում, ուր գէթ մի շարքաթւայ ընթացքում՝ Մննդեան կամ Զատիկի արծակուրդներին, հնար լինէր մի շարք զեկուցումներ անել մատչելի ձևով՝ իմիչի այլոց սովորող երիտասարդութեան և ժողովրդի զրադէտ դասի մէջ արծարծելու հայ ազգազրութեան էական գիտելիքները և նրա կարևորութիւնը: Ազգազրական համաժողով էլ կարող էր այսպիսի դէպքում շատ հետաքրքրել մեծ հասարակութիւնը և իր արդիւնքները ունենալ:

7. Նիւթեր ժողովելուն և հետաքրքրութիւն շարժելուն

կարող էին նպաստել և հայ ազգագրական լասնգարանները — մուսէօնները, որոնց հիմնելու մասին՝ սկզբում նաև համեստ չափերով, պէտք է հողալ՝ առ այժմս գտնէ Թիֆլիս, ուր կայ արդէն նման մի ազգային-եկեղեցական հիմնարկութիւն: Այսպիսի մի հաստատութիւնը կարող էր դոհացնել ոչ միայն հանրամատչելի և ընդհանուր-կրթական, այլև զխաական պահանջներին, եթէ նա բաւական լիամասն և սխտեմատիք կերպով լինի կազմուած:

8. Մեծ կարևորութիւն ունի հայ ազգադրութեան համար և դրացի ազգերէ (վրացի, պարսիկ, քուրդ, եղիտ, թիւրք), ասորի, յոյն) ընկերական և հասարակական կենցաղի համեմատական ուսումնասիրութիւնը և նրանց ու հայերի փոխադարձ այլևայլ առնչութիւնները: Հայ ժողովրդի մէջ տարածուած որևէ ծէս, սովորոյթ, նախապաշարմունք, հաւատալիք պէտք է համեմատել վրացի ազգերի նմանօրինակ երևոյթների հետ՝ եթէ այդպիսիներ գտնուեն, ուսումնասիրել այդ վարիանտները, շանք անել պարզելու աստիճանաբար փոփոխումները և գուցէ որոշել վրանցից հնազոյնը կամ նախատիպը և այլն: Նոյնը ասելու է և ժողովրդական բանաւոր զրահանութեան տեսակների՝ վէպի, հէքիաթի, երգի և այլն, որպէս և իրաւաբանական սովորութիւնների մասին՝ հողային համայնքին վերաբերեալ խրնիւրների հետ միասին:

9. Հարկաւ, մեր չիշած բարի ցանկութիւններից շատերը հազիւ թէ այնպէս զիւրին և այնպէս արագ իրագործւին, մինչև որ Կովկասը չունենայիր համալսարանը, կամ համալսարանատիպ բարձրագոյն դպրոց և կամ դէթ պատշաճաւոր պատմական-լեզուագիտական ֆակուլտետ, ուր՝ այլ առարկաների շարքում, կաւանդւի անշուշտ Կովկասադիտութիւնը — ամենայայն ժրագրով, ուրեմն և Կովկասեան ազգադրութիւնը, որի ճիւղերից մէկը լինելու է և հայ ազգադրութիւնը:

Ձերմապէս հաւատալով այդպիսի մի բարձրագոյն ուսումնական հաստատութեան մտալուտ իրագործմանը՝ հաստատութեան, որ միանգամայն անհրաժեշտ է անխտիր բոլոր կովկասեան ազգութիւնների խաղաղ բարգաւաճման և յառաջադիմութեան համար, ուրեմն և պետական լուրջ շահերի համար, — կնքում եմ իմ տեսութիւնս: